

**Արձանագրություն N7**  
**Ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի**  
**06.06.2017թ. նիստի**

**Օրակարգ**

1. Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դոցենտ Ս. Գաբրիելյանի կողմից էթիկայի նորմերի խախտման հարցի քննարկում:
2. 2016-2017 ուս. տարում ամբիոնների կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն: /Ս. Գասպարյան, Ե. Երզնկյան, Մ. Ապրեսյան/:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 32 անդամներից 25-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝

Ֆակուլտետի ղեկան և գիտխորհրդի նախագահ Ս. Աբրահամյանն իր ափսոսանքն արտահայտեց այն փաստի վերաբերյալ, որ Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դոցենտ Ս. Գաբրիելյանի ղեկավարած դիպլոմային աշխատանքի բողոքարկումն ուղեկցվել է էթիկայի նորմերի խախտումներով, որի վերաբերյալ հանձնաժողովի նախագահ Ս. Մարգարյանը իր բողոքն է հայտնել ոչ միայն ղեկանին, այլև ԵՊՀ ռեկտոր Ա. Միմոնյանին: Այսպիսի միջադեպերը հետայսու բացառելու համար անհրաժեշտ է տվյալ հարցը քննարկել գիտխորհրդում և կայացված որոշումները ներկայացնել ԵՊՀ ռեկտորին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դոցենտ Սեդա Գաբրիելյանը բացատրեց, որ ինքը որևէ մասնակցություն չի ունեցել տվյալ հարցը հրապարակայնացնելու գործում և նշեց, որ դիպլոմային աշխատանքը իրավացիորեն է գնահատվել 15 բալ, քանի որ հեղինակը պատշաճ մակարդակով չի ներկայացրել այն: Որպես ղեկավար, տեսնելով ուսանողի վրդովմունքը, ինքն ուղղակի խորհուրդ է տվել նրան բողոքարկել գնահատականը: Նա փաստեց, որ իրեն ուղղված մեղադրանքներից մեկն այն է, որ ուսանողին դրդել է բողոքարկել, մյուսն այն է, որ հանձնաժողովին անվանել է *անգրագետ*:

Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Ս. Գասպարյանն իր ելույթում ասաց, որ բողոքարկումը չի կարող դժգոհության տեղիք տալ, քանի որ դա ուսանողի իրավունքն է: Ս. Գասպարյանը նշեց, որ ինքը տեղյակ է տեղի ունեցածի մասին, քանի որ հանձնաժողովի նախագահ Ս. Մարգարյանը, խոսելով իր հետ՝ վրդովմունք և վիրավորանք է արտահայտել այդ առնչությամբ: Հանձնաժողովը բողոքարկման վերաբերյալ որևէ դժգոհություն չի արտահայտել: Հանձնաժողովի և նախագահի վրդովմունքը վերաբերել է Ս. Գաբրիելյանի՝ հանձնաժողովի անդամներին անվանարկելուն և վիրավորելուն: Նա հավելեց, որ միջադեպն ամոթալի է բոլոր դասախոսների համար, և որ ինքը ստիպված է եղել ներողություն խնդրել Ս. Մարգարյանից Ս. Գաբրիելյանի պահվածքի համար: Ս. Գասպարյանը նշեց, որ ինքը երկար տարիներ ճանաչում է հանձնաժողովի նախագահ, բ.գ.թ., դոցենտ Ս. Ա. Մարգարյանին որպես բանիմաց ու բարեկիրթ անձնավորություն և ափսոսանք հայտնեց այն մասին, որ տհաճ և մեր համալսարանին պատիվ չբերող այս միջադեպը կարող է բացասական ազդեցություն ունենալ երկու համալսարանների գործընկերային հարաբերությունների վրա: Նա շեշտադրեց այն փաստը, որ ուսանող

կրթելն ու դաստիարակելը չափազանց պատասխանատու գործ է, և դասախոսի վարքագիծը շատ կարևոր գործոն է ուսանողի բարոյական կերպարի ձևավորման գործում: Բացի այդ աշխատանքային հարաբերություններում սուբյեկտիվ գործոններն ու պատեհ, թե անպատեհ հավակնությունները չպետք է դեր խաղան, ինչպես նաև անհրաժեշտ է ցանկացած իրավիճակում պահպանել ինքնատիրապետումը և դասախոսին վայել պահվածք դրսևորել: Նա կոչ արեց պատվախնդրության, ի շահ ընդհանուր գործի համախմբվելու և բարի խոսքով ու բարի գործով աջակցելու Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնիում ստեղծված դժվարին ու անցանկալի իրավիճակը հաղթահարելու համար:

Անգլերենի թիվ 2 ամբիոնի դոցենտ Ն. Թովմասյանը հայտնեց, որ Մլավոնական համալսարանի իր կոլեգան՝ Մանե Մարինյանը, որը նաև նշված հանձնաժողովի անդամն է եղել՝ իր վրդովմունքն ու վիրավորանքն է հայտնել Ս. Գաբրիելյանի ագրեսիվ վարքի և հանձնաժողովի անդամներին վիրավորելու վերաբերյալ:

Անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ Ե. Երզնկյանը նշեց, որ դատապարտելի և համալսարանի դասախոսին ոչ հարիր է համարում տեղի ունեցածը և կարծում է, որ ամեն ինչ պետք է անել ֆակուլտետում նման երևույթները բացառելու համար:

Ս. Գաբրիելյանը նորից խոսք խնդրեց և հայտարարեց, որ ինքը հանձնաժողովի նախագահին և անդամներին վիրավորելու որևէ միտում չի ունեցել, և թյուրըմբռնման համար ինքն արդեն ներողություն է խնդրել հանձնաժողովի նախագահ Ս. Մարգարյանից: Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ռ. Ղազարյանը, որը նաև նշված հանձնաժողովի անդամ է եղել, նախ իր ափսոսանքն արտահայտեց այն փաստի վերաբերյալ, որ ամբիոնում կուտակված բազմաթիվ խնդիրները լուծելու փոխարեն ստիպված են նմանատիպ հարց քննարկել, ապա ավելացրեց, որ տվյալ դիպլոմային աշխատանքի բողոքարկումը հանձնաժողովի բացասական վերաբերմունքի պատճառ չի հանդիսացել, և միակ խնդիրը վերաբերում է բողոքարկման ընթացքում էթիկայի նորմերի կոպտագույն խախտման դրսևորումներին: Գիտական ղեկավարը հավանաբար վրդովված է եղել, բայց պետական քննությունը պատասխանատու և լուրջ պրոցես է, որի ընթացքում միջանցքում բարձրաձայն, ի լուր բոլոր ուսանողների վրդովմունք արտահայտելն ու հանձնաժողովին անգրագետ որակելը ամենևին ճիշտ քայլ չէ:

Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ. Ապրեսյանն ասաց, որ բարձր է գնահատում ոչ միայն իր կոլեգաներ Ռ. Ղազարյանին և Ս. Գաբրիելյանին, այլև Ս. Մարգարյանին, և կարծում է, որ նրանք այնպիսի պատասխանատու անձինք են, որ կարող են թիմային մտածողություն դրսևորել և բարեկամաբար հարթել տհաճ միջադեպը:

Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ Զ. Հարությունյանը հայտնեց, որ Ս. Մարգարյանին ճանաչում է որպես հավասարակշռված անձնավորություն և կարծում է, որ

նա այնքան վրդովված է եղել միջադեպից, որ որոշել է այդ մասին հայտնել ռեկտոր Ա. Միմոնյանին: Ձ. Հարությունյանը ընդհանրապես դատապարտելի համարեց կոլեգաների հասցեին տարբեր բամբասանքներ տարածելը կամ միջանցքում կոլեգաներին կամ ամբիոնի վարիչին անգրագետ կոչելով անվանարկելը՝ համարելով դրանք համալսարանի դասախոսի կերպարին անհարիր երևույթ: Նա նաև առաջարկեց աջակցել Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնին՝ շտկելու ամբիոնում տիրող մթնոլորտը:

Դարձյալ խոսք խնդրելով՝ Ռ. Ղազարյանը նշեց, որ տվյալ միջադեպը Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնում տարիներ շարունակ տիրող անառողջ մթնոլորտի, Ս. Գաբրիելյանի ամբիցիոզ նկրտումների հետևանքն է: Ներկայումս կարևորը ամբիոնի կայացմանը նպաստելն է և ոչ թե իրավիճակը ավելի բարդացնելը:

Միջմշակութային հաղորդակցության ամբիոնի վարիչ Շ. Պարոնյանը հույս հայտնեց, որ Ռ. Ղազարյանն ու Ս. Գաբրիելյանը համատեղ ջանքերով կհաղթահարեն վիճահարույց իրադրության հետ կապված խնդիրները և կկարողանան առողջ մթնոլորտ ապահովել Թարգմանության տեսության ու պրակտիկայի ամբիոնում:

Գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ Յու. Գաբրիելյանը նշեց, որ ուսանողը երբեք չպետք է ծառայի որպես ամբիցիաների իրականացման միջոց, և լիովին ակնկալելի էր, որ Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնում տիրող լարված մթնոլորտը ի վերջո նման ձևով պետք է արտահայտվեր: Նա կոչ արեց պրոֆեսիոնալիզմ ցուցաբերել և հաղթահարել ծառայած խնդիրները:

Ս. Գաբրիելյանը շնորհակալություն հայտնեց գիտխորհրդին նշված միջադեպը քննարկելու համար, նշեց, որ մարդն իր ընտանիքում կարող է սխալներ թույլ տալ և հայցեց վիրավորված կոլեգաների ներողամտությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ի գիտություն ընդունել քննարկման արդյունքները և փաստել,

1. որ իրոք տեղի է ունեցել էթիկայի նորմերի խախտում,
2. որ սույն քննարկումը դրական քայլ է՝ ուղղված հետազայում նման իրավիճակներից խուսափելուն,
3. որ աշխատանքային խնդիրները պետք է առաջին հերթին քննարկվեն և լուծումներ գտնեն հենց տեղում՝ ամբիոններում և ֆակուլտետում:

2. ԼՍԵՑԻՆ՝

Անդրադառնալով 2016-2017 ուս տարում անգլիական բանասիրության ամբիոնի կատարած աշխատանքներին՝ ամբիոնի վարիչ Ս. Գասպարյանը նշեց, որ 58 աշխատակից /3 պրոֆեսոր, 3 դոկտոր, 33 բ.գ.թ., կոչումով 9 դոց., պաշտոնով 15 դոց./ ունեցող ամբիոնում հաշվետու ժամանակաշրջանում հրատարակվել է 3 մենագրություն, 25 հոդված, 19 գիտաժողովի թեզիս, հրատարակման է պատրաստվում 3 դասագիրք և անցկացվել է 1 միջազգային գիտաժողով: Ներկայացվել է 1 թեմատիկ նախագիծ: Ամբիոնն իրականացնում է բազային 1 թեմա: Էրազմուս պլյուս նախագծի շրջանակներում իտալական Կաֆոսկարի

համալսարան են ուղարկվել 2 բակալավրիատի և 3 մագիստրատուրայի ուսանող, նախատեսվում է 2 դասախոսի գործուղում: Ամբիոնի հրավերով ֆակուլտետում դասախոսություններ են կարդացել Կաֆոսկարի համալսարանի դոկտորներ Ս. Հարությունյանն ու Ա. Ջորջին, ինչպես նաև պրոֆեսորներ Ս. Տեր-Մինասովան և Գ. Դոբրոսկլոնսկայան: Վերանայվել են ուսումնական պլաններն ու ծրագրերը: Հաջող ընթացքի մեջ է *Կիրառական լեզվաբանություն* մագիստրոսական ծրագիրը:

Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ. Ապրեայանը զեկուցեց, որ հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնը անգլերենի դասընթացներ է անցկացրել ԵՊՀ տարբեր ֆակուլտետներում, անցկացրել ԹՕԵՖԼ դասընթացներ և քննություններ, ինչպես նաև հաջողությամբ իրականացրել է ԱյԹԵՓ քննությունը՝ անգլերենի իմացության միջազգային վկայագրի տրամադրմամբ: Ամբիոնի դասախոսներն ակտիվորեն մասնակցել են հանրապետական և միջազգային գիտաժողովների և ստացել հավաստագրեր, ինչպես նաև տարբեր դասախոսությունների, ԵՊՀ-ում անցկացված միջազգային ծրագրին և բնագետների համար Տոմսկի համալսարանի կողմից կազմակերպած առցանց օլիմպիադային: Հրատարակվել է 1 դասագիրք, 1 ուսումնական ձեռնարկ, 3 տեխնիկական բառարան, 2 մենագրություն, 3 հոդված, 8 թեզիս:

Անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ Ե. Երզնկյանը զեկուցեց, որ հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի կողմից իրականացվել են նախատեսված բոլոր աշխատանքները՝ դասալսումներ են անցկացվել տարբեր ֆակուլտետներում, արդի լեզվաբանությանն առնչվող ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվել են գիտաժողովներում և հրատարակվել պարբերականներում: Ամբիոնի գրեթե բոլոր դասախոսները անցել են վերապատրաստման դասընթացը և հանձնել միջազգային թեստային քննությունը: Ամբիոնը շարունակում է հրատարակել իր գիտական հանդեսը և գիտամեթոդական հանդեսը /Ս. Գասպարյանի, Ե. Երզնկյանի և Մ. Ապրեայանի հաշվետվությունները կցվում են/:

ՈՐՈՇԵՑՑԻՆ՝

Անգլիական բանասիրության, անգլերենի թիվ 1 և անգլերենի թիվ 2 ամբիոնների՝ հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքները գնահատել լավ:

### 3. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Որոշեցին՝

- Տպագրության երաշխավորել Ս. Նավասարդյանի «Մեղքի և ապաշխարանքի խնդիրը Գյունտեր Գրասսի *Դանգիզյան եռագրության մեջ*» մենագրությունը:
- Տպագրության երաշխավորել Կ. Մխիթարյանի և Ա. Գևորգյանի *Develop Your Vision of English* դասագիրքը:
- Վերահրատարակման երաշխավորել Մ. Յաղուբյանի, Ա. Խաչատրյանի, Լ. Մադոյանի *English Grammar in Practice (Part I)* դասագիրքը:
- Երաշխավորել Ա. Այունցի և Լ. Սարգսյանի թեկնածությունները դոցենտի գիտական կոչման ներկայացնելու համար:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

6 հունիսի 2017թ.